

«ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՖԵՆՈՄԵՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հիմնախնդիրը: «Զարգացում» հասկացությունը լայնորեն գործածվում է գրեթե բոլոր բնագավառներում՝ կենցաղից մինչև գիտություն ու փիլիսոփայություն: Այս կատեգորիայի չափազանց կարևորությունն ու կիրառելիությունը կասկածից վեր է: Չնայած թվացյալ միանշանակությանը՝ այն բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս հատկապես փիլիսոփայության մեջ: Սակայն տարբեր գիտակարգերում, այդ թվում և հոգեբանության մեջ, ուսումնասիրվող համակարգերի զարգացման մասին դիտարկումները ապրիորի բնույթ են կրում՝ չքննարկելով կամ նույնիսկ անտեսելով «զարգացում» հասկացության բուն էությունը: Իսկ այդ էության սահմաններից հաճախ դուրս է մնում հենց ճանաչողության սուբյեկտը՝ իր ճանաչողական հատկություններով ու հնարավորություններով: Զարգացումը նկարագրող մոդելները հիմնականում կենտրոնանում են առարկայի (համակարգի) շարժման և ձևափոխությունների դիտարկման վրա՝ հաճախ «աչքաթող» անելով դիտորդին: Այս առումով զարգացման խիստ օբյեկտիվացման միտումը հաճախ հանգեցնում է համակարգերի ուսումնասիրման և ձևավորման մի շարք դժվարությունների. բարդություն են ներկայացնում, օրինակ, համակարգի զարգացման փուլերի հստակեցումն ու զանազանումը, ուսումնասիրվող երևույթի պարբերացումներն ու դասակարգումները, որակաքանակական անցումների առանձին պահերի գրանցումը, ինչպես նաև այդ գործընթացում ժամանակային միավորների հաշվառումը: Այս դժվարություններն առավել սուր դրսևորումներ են ստանում հատկապես հոգեբանական համակարգերում, քանի որ այստեղ գործ ունենք ինքնակազմակերպվող, հաշվետու և հաշվենկատ օբյեկտի (սուբյեկտի) հետ: Ինչպիսի՞ մոտեցում է նպատակահարմար այնպիսի դեպքերի համար, երբ, օրինակ, տարբեր մարդկանց գնահատմամբ տվյալ օբյեկտը բարդացման կամ զարգացման տարբեր աստիճաններ ունի, կամ էլ նույն մարդը բարդության տարբեր աստիճաններ է վերագրում միևնույն օբյեկտին՝ կախված հոգեվիճակներից, դիրքորոշումներից, դրդապատճառներից և այլն:

Դասականորեն՝ իմաստասիրական է տարաբնույթ զարգացումները բացահայտելու և մեկնաբանելու խնդիրը: Սակայն դրա գործնական լուծումը տեսնում ենք հոգեբանության մեջ, այն է՝ բարդ օբյեկտի պարզեցում մտային մոդելավորմամբ, որի կարողությունը ձեռքբերելի է համապատասխան մտավարժանքով: Ուստի ակնարկային անդրադարձից հետո առաջարկվում է «զարգացում» հասկացության մեկնաբանության նոր մոտեցում՝ հոգեբանական (սուբյեկտիվ), որը, կարծում ենք, կարող է նպաստել օբյեկտիվ փոփոխությունները առավել նուրբ և ճշգրիտ գնահատելուն:

Այս նկատառումներից ելնելով՝ ձևակերպվում են հետևյալ հենքային հարցադրումները.

- ի՞նչ է զարգացումը,
- ինչպե՞ս իմանալ և գրանցել համակարգի զարգացումը:

Համառոտ անդրադարձ «զարգացում» հասկացությանը: Դասական սահմանումներում «զարգացումը» ինքնըստինքյան վերագրվում է օբյեկտին (համակարգին): Այն կիրառվում է ինչ-որ բանի առաջընթացը՝ պրոգրեսը, և հետընթացը՝ ռեգրեսը, նկարագրելիս: Հասկացությունը հիմնականում բացատրվում է որպես շարժում ստորինից (պարզից) դեպի վերինը (բարդը), հին որակից նոր որակի օրինաչափ անցում: Այն ենթադրում է առարկայի կառուցվածքի ու կազմության այնպիսի փոփոխություն, որի հետևանքը որակապես նոր վիճակն է:

«Ջարգացում» կատեգորիան դիալեկտիկական ելակետային գաղափար է, որի գիտակցումով սկսվել է դիալեկտիկայի մշակումը: Տվյալ գաղափարի ընդունումը թույլ է տալիս աշխարհը պատկերացնելու մշտական շարժման մեջ, այսինքն՝ գտնվում է զարգացման մեջ և որակական փոփոխություններ կրում տարբեր ուղղություններով (առաջընթաց կամ հետընթաց):

Ջարգացման հիմնական նախանշաններն են՝ 1) փոփոխությունների որակական բնույթը, 2) դրանց անշրջելիությունը, 3) դրանց ուղղորդվածությունը: Այս նախանշաններից ոչ մեկը և ոչ էլ նույնիսկ երկուսը բավարար չեն զարգացման սահմանման համար: Ջարգացման ելակետային սահմանումն է. զարգացումը համակարգի ուղղորդված, անշրջելի որակական փոփոխությունն է:

Այս և նմանատիպ սահմանումները գոյաբանորեն միգուցե անթերի են, սակայն իմացաբանական առումով բազմաթիվ վեճերի առիթ են տալիս՝ խորը անջրպետ դնելով ճանաչողության օբյեկտի և սուբյեկտի միջև: Մի կողմից մենք կարող ենք ճանաչել երևույթները (կանխատեսել և բացատրել): Մյուս կողմից՝ մեր գիտելիքը մնում է հարաբերական, քանզի տությունը ճանաչում ենք երևույթների միջոցով, որոնք մատչելի են մեզ լոկ այնքանով, որքանով թույլ են տալիս մեր հնարավորությունները և ոչ հազվադեպ նաև ճանաչողության առարկայի անկանխատեսելի խորությունն ու բարդությունը:

Դասական սահմանումներում զարգացումը հաճախ դիտվում է որպես մեկ հատկություն, այն էլ՝ կեցության և ճանաչողության միասնության մեջ: Սակայն մութ է մնում իմացական կամ տրամաբանական այն մեխանիզմը, որի շնորհիվ մարդու ճանաչողական հատկություններն ու հնարավորություններն առնչվում և հարաբերակցվում են կեցության առանձին տարրերին ու հարաբերություններին, առարկայի, այսպես կոչված, խորություններին ու բարդություններին: Ջարգացումը միանշանակորեն ընդունվում է որպես առաջընթաց կամ հետընթաց, վերընթաց կամ վարընթաց, այն էլ՝ օբյեկտիվորեն կանխորոշված ձևերով և ուղղվածությամբ (անշրջելիության լուրջ և ծանրակշիռ գաղափարի ներքո): Սակայն հարց է, թե ինչ կողմնացույցով են կողմնորոշվել տվյալ սահմանումների հեղինակները, և թերմոդինամիկայի 2-րդ օրենքից բացի, արդյոք այլևս հնարավոր չէ այլ օրենքով ու չափանիշով բացատրել անշրջելիությունը, քառսի ու կարգավորվածության հարաբերությունը¹:

¹ Այս առիթով Ն. Բորը (1885-1962 թթ.) նկատել է. «Անշրջելիությունը մեր չիմացության տարրի ներառումն է ֆիզիկայի հիմնական օրենքների մեջ» (Пригожин И., Стенгерс И. Порядок из Хаоса. М., 1986, с. 300):

Ձարգացմանն այնպիսի օբյեկտիվություն է հաղորդված, որ սուբյեկտի կողմից իրականության ճանաչումն ու գնահատումն անգամ բավարար պայմաններ չեն՝ աշխարհում նրա ակտիվ միջամտության փաստը խոստովանելու, զարգացման գործընթացներին նրա մտավոր և գործնական մասնակցությունն արձանագրելու համար²: Դիալեկտիկական մեթոդաբանությունն իր կատարյալ հետևողականությամբ ու խստաբարոյությամբ սահմանել է «զարգացումը»՝ դրանով իսկ կաշկանդելով ու ծանր կասկածի տակ ամենելով զարգացման ռացիոնալ որևէ այլ ելքի հնարավորությունը: Կարծում ենք, որ վերջին հանգամանքը պատճառներից մեկն է, որ տարբեր գիտակարգերում համապատասխան առարկաների զարգացումների հետազոտման ժամանակ չհասկացվածությունն ու անկանխատեսելիությունը վերագրում են ինքնին առարկային, այլ ոչ թե այն գործիքներին ու մեթոդներին, որոնցով դրանք ուսումնասիրվում են: Եվ մի տեսակ մոռացության է մատնվել այն փաստը, որ ճանաչող սուբյեկտը, բացի տրամաբանությունից, օժտված է նաև հոգեվիճակներով ու դրդապատճառներով, դիրքորոշումներով ու վարքային միտումներով, կարծրատիպերով ու մնացորդային գիտելիքներով: Վերջիններս պակաս կարևոր չեն գիտակցության գործառնությունների և հասկացական մոդելների կառուցման համար՝ դրանցով իսկ որոշելով այս կամ այն առարկայի (համակարգի) կարգավիճակն ու հեռանկարները:

Այս հողվածում օգտագործելով լայնորեն ընդունված հասկացությունները, չընդդիմանալով դասական-ակադեմիական մոտեցումներին՝ կփորձենք հնարավորինս հակիրճ ներկայացնել «զարգացման»՝ ուշադրությունից վրիպած ֆենոմենոլոգիական կողմը: Մեր կարծիքով՝ դա հենց հոգեբանական կողմն է:

Ձարգացումը նկարագրող մի քանի մոդելներ: Թեպետ «զարգացում» երևույթը ընդհանուր առմամբ և սկզբունքորեն նույնանման բացատրությունների է արժանանում, սակայն, այնուհանդերձ, առանձնանում են տարբեր մոտեցումներ, կոնցեպցիաներ ու մոդելներ, որոնցով առանձին շեշտադրումներ են արվում թե՛ զարգացման օբյեկտի տեսակի ու բնույթի, թե՛ զարգացման ուղղվածության որոշման վրա, ինչպես նաև համակարգի կառուցվածքաբանական և գործառական կողմերի վրա:

Ձարգացման բնապաշտական մոդելը, որ բնորոշ էր 19-րդ դարի երկրորդ կեսին, հաճախ անվանվում է նաև բնագետների տարերային դիալեկտիկա: Այն հիմնված է էվոլյուցիայի մասնավոր հասկացման բացարձակացման վրա, որն այնուհետ տարածվում է ողջ աշխարհի բացատրության վրա:

Ձարգացման մարդաբանական մոդելը հակադիր է դիալեկտիկայի նախորդ տարբերակին: Սա հիմնված է մարդու հոգևոր էությանը հասու

² Ըստ Էտկինսի՝ «Մարդկային մակարդակում անդարձելիությունը ձեռք է բերում առավել խորքային իմաստ, որը մեզ համար մեր գոյության իմաստից անբաժանելի է: Այս տեսակետի համաձայն՝ կարևոր է այն հանգամանքը, որ անդարձելիության ներքին զգայման մեջ մենք չենք դիտարկում առավել սուբյեկտիվ տպավորությունները, որոնք մեզ օտարում են արտաքին աշխարհից, այլ դրանում տեսնում ենք «աշխարհի գործերին» մեր մասնակցության յուրատեսակ տարբերանշանը, որը գտնվում է էվոլյուցիոն հարացույցի ներքո: Շրջելի շարժումները կարողանում ենք ճանաչել զուտ այն պատճառով, որ գիտենք անշրջելիության մասին» (Эткинс П. Порядок и беспорядок в природе. М., 1987, с. 369-371):

դառնալու գործում գիտական ճանաչողության մեթոդների կտրուկ քննադատության վրա (էկզիստենցիալիզմ, պերսոնալիզմ և այլն):

Ձարգացման հավասարակշիռ-ինտեգրատիվ մոդելի գերակա նպատակը հասարակական զարգացումների ու փոխակերպումների բացատրությունն է (ակունքները հասնում են մինչև 17-րդ դ.): Սա զարգացումը ձևակերպելու մի տարբերակ է, որը ելնում է ֆիզիկական հավասարակշիռ համակարգերի չափանիշների բացարձակացումից: Այս մոտեցումը աստիճանաբար տարածում է գտնում նաև այլ գիտություններում, որոնք դիտարկում են առարկաները որպես *բարդության* տարբեր աստիճաններ ունեցող համակարգեր: Սրանով հավասարակշռության ֆիզիկական տեսությունը դառնում է աշխարհի բացատրության համընդհանուր սկզբունք:

Սակայն *զարգացման դիալեկտիկական մոդելի* գազաթը դարձավ *Գ. Վ. Յեզելի* կոնցեպցիան: Դիալեկտիկական կոնցեպցիաների մեծ մասը, այնուամենայնիվ, այս կամ այն ձևով հիմնվում է հեգելյան մոդելի վրա: Ժամանակակից հասկացմամբ՝ դիալեկտիկան բնության, հասարակության, մտածողության զարգացման փիլիսոփայական տեսությունն է, ճանաչողության ու աշխարհի վերափոխման մեթոդ: Նկարագրելով աշխարհի զարգացումը՝ Յեզելը ելնում էր օբյեկտիվ իդեալիստական գաղափարից, ըստ որի՝ աշխարհի զարգացումը ոգու արարչագործության (բացարձակ բանականության, Աստծո) արդյունք է: Այդ իսկ պատճառով Յեզելի բացահայտած դիալեկտիկական օրենքները, ըստ էության, հանդիսացել են ոգու զարգացման օրենքներ: Ըստ այդմ էլ՝ Յեզելի դիալեկտիկան իդեալիստական բնութագիր է ստացել:

Մատերիալիստական դիալեկտիկայի տեսությունն ունի զարգացման փոխլրացնող երկու բացատրություն՝ *գաղափարական և տեսական*:

Առաջին մակարդակը կազմում են այն սկզբունքները, որոնք սահմանում են աշխարհը հասկանալու դիալեկտիկամատերիալիստական միջոցը:

Երկրորդ մակարդակում ձևավորվում են մատերիալիստական դիալեկտիկայի օրենքները, որոնցում իրենց արտացոլումն են գտնում աշխարհի զարգացման կառուցվածքը բնութագրող օբյեկտիվ, առավել ընդհանուր, կրկնվող, կայուն, անհրաժեշտ, էական կապերը: Այստեղ հիմնականում գործում են հակադրությունների միասնության և պայքարի, քանակական և որակական փոփոխությունների փոխադարձ անցման և բացասման բացասման սկզբունքները:

Գրադուալիստական մոդել: Առավել նշանավոր ներկայացուցիչը անգլիացի փիլիսոփա Յ. Սպենսերն է: Նա առաջադրեց և հիմնավորեց ողջ բնության համընդհանուր աստիճանական էվոլյուցիայի դրույթը: Ըստ այս տեսակետի՝ համընդհանուր էվոլյուցիայի հիմքում ընկած է մատերիայի մասնիկների մեխանիկական վերաբաշխման պրոցեսը, իսկ ինքը՝ էվոլյուցիան, շարժվում է համասեռությունից դեպի տարասեռություն, տարասեռությունից՝ ավելի տարասեռություն: Ըստ Սպենսերի՝ «էվոլյուցիայի բանաձևը» հետևյալն է. մատերիայի և շարժման դիֆերենցիացիան ու ինտեգրացիան տեղի են ունենում շարժման գծի նվազագույն դիմադրողականության և խմբավորման մեխանիկական օրենքների համաձայն:

«Ստեղծագործական էվոլյուցիա» կամ էմերջենտիզմ: 19-րդ դ. երկրորդ կեսին արևմտաեվրոպական փիլիսոփայության մեջ ձևավորված այս հայեցակարգի հիմնական գաղափարներն են.

1. զարգացումը հիմնվում է *Նոր որակի ծագման* փաստի՝ որպես սկզբնականին չառնչվող, «պայթյունակերպ», *արագ թռիչքի* գաղափարի վրա,

2. Նոր որակը հանդես է գալիս որպես ներքին, ստեղծագործական ուժի արդյունք,

3. առավել բարձր աստիճանները չեն կարող կանխագուշակվել՝ ելնելով սկզբնական որակներից,

4. որպես հանկարծակի թռիչքների արդյունք՝ ձևավորվում է եվոլյուցիայի մակարդակների համակարգ:

Թռիչքի մասին պատկերացումը պայմանավորված է գործընթացի արագացմամբ: Համաձայն ընդունված տեսակետի՝ թռիչքը միշտ փոփոխությունների հարաբերականորեն արագացված զարգացումն է, մի որակից մյուսին անցումը:

Իհարկե, «*արագացում*» և «*թռիչք*» հասկացություններն օգտագործվում են դարձյալ ապրիորի կերպով՝ օբյեկտիվ հարաբերական համեմատությամբ: Սակայն համեմատության որևէ նկարագրություն չի հայտնաբերվում՝ պայմանավորված զգայական ընկալման շեմերի յուրահատկություններով, օպերատիվ հիշողության հնարավորություններով, տրամադրության փոփոխականության և հոգեբանական այլ երևույթներով: Վերջիններս, ըստ մեր կարծիքի, կազմում են տարաբնույթ շարժումների ընթացման սուբյեկտիվ հիմքերը: Դրանք հաշվի առնելով՝ պետք է բնութագրել զարգացման գործընթացային միավորները:

Ջարգացման ուղղվածության հիմնախնդրի հետ է կապված առաջընթաց (պրոգրես) հասկացությունը: Որոշ հետազոտողներ ժխտում են այդ հասկացությունը՝ որպես տելեոլոգիական, մյուսներն ընդունում են այն որպես չափանիշ կամ արժեքային դիրքորոշում: Այս հասկացության կիրառումը վկայում է մարդու ցանկության մասին՝ բնությանը վերագրելու նպատակահարմար (հաշվենկատ) հատկություններ: Այս կամ այն փոփոխությունը գնահատելով որպես առաջընթաց կամ հետընթաց՝ ընդամենը ցույց է տրվում հետազոտողի արժեքային դիրքորոշումը: Ենթագիտակցաբար ձգտելով ավելիին, կատարյալին՝ մարդը գերազնահատում է սպասվող յուրաքանչյուր հաջորդ վիճակը՝ այն համարելով առաջընթաց: Ընդ որում, իր նշանակությունն առավել շեշտադրելու և ինքնահաստատվելու համար հակվում է բարդացնելու, դժվարացնելու խնդիրներն ու դրանց լուծումները: Որպես կանոն՝ բարձր գնահատանքի են արժանանում բարդ, դժվար գործողություններն ու ճանապարհները՝ չմոռանալով, սակայն, «պարզ հանճարեղության» մասին... Առաջընթացը սահմանվում է որպես համակարգի զարգացում ցածրակարգից դեպի բարձրակարգ: Ջարգացման հակադիր ուղղությունը՝ հետընթացը, այս դեպքում կլինի համակարգի փոփոխությունը՝ բարձրակարգից դեպի ցածրակարգ: Բարձրակարգը հիմնականում նույնացվում է բարդի հետ, իսկ ցածրակարգը՝ պարզի: Դրանից ելնելով՝ դատողությունները հանգեցնում են այն գաղափարին, որ զարգացումը պարզից բարդ ուղղվածություն ունի: Այստեղ նկատում ենք հոգեբանական մի հետաքրքիր ֆենոմեն՝ կապված մարդու «երկրային կենցաղի» հետ: Բանն այն է, որ գեներտիկորեն և պատմականորեն մարդու մեջ ձևավորված են ֆիզիկական և մտավոր հմտությունների նախադրյալներ, որոնք բնորոշ են երկիր մոլորակի բնությանը՝ հարմարվելու, ապրելու և գոյատևելու համար: Այդ նախադրյալների մեջ մտնում են նաև կարծրատիպացման (ստե-

րեռտիպիզացիա) հատկությունները. մարդու տեսադաշտի թուլատրելի հնարավորություններով կարող են պայմանավորված լինել նաև նրա աշխարհընկալումն ու վարքը: Տեսադաշտի ուղղահայաց-ստորին հատվածը («ներքև») հնադարյան մարդուն, որպես կանոն, մատչելի, հասանելի է եղել. տեղաշարժվել է գետնի վրա և կողմնորոշվել հիմնականում վերգետնյա օբյեկտներով: Միևնույն ժամանակ նա տեսել է հողից ծագող, ծլարծակող և աճող բույսերը, մեռած կենդանիների ու արտաթորանքի քայքայումը հողում, ընկնելու դեպքում՝ գետնին ընկնելն ու վնասվելը, տարբեր առարկաների կորուստները խոտերում, թփերում ու փոսերի մեջ և այլն: Տեսադաշտի վերին հատվածը մարդու համար եղել է դժվարահաս, անորոշ, քիչ կիրառելի, իսկ երկնային մարմիններն ու թռչող կենդանիները՝ երազանքների ու երևակայության աղբյուր: Տեղին է հիշել նաև մարդու ապերցեպցիայի վերաբերյալ հետազոտությունները: Դրանց արդյունքները ցույց են տվել, որ ուղղահայաց գծերն ընկալելիս ավելի շատ էներգիա ու ժամանակ է պահանջվում, քան հորիզոնականի դեպքում: Դրանով բացատրվում է տեսողական պատրանքների այն փաստը, որ ուղղահայացներն ավելի երկար են թվում, քան հորիզոնականները: Այս իսկ պատճառով հնարավոր է, որ մարդու գիտակցության խորքերում մոդելավորվել և ամրագրվել է «բարձրը»՝ որպես արժեքավոր, վեհ, բաղձալի, իսկ «ցածրը»՝ որպես ստորին, նվազ: Այստեղից էլ՝ մեր այն կարծրատիպը, ըստ որի՝ գոյություն ունի ստորակարգից բարձրակարգ ուղղահայաց շարժում և, համապատասխանաբար, սովորել ենք բարդության մակարդակներ առանձնացնել, կատարել հիերարխիկ դասակարգումներ:

Շարունակելով նույն տրամաբանությամբ՝ պարզ է դառնում հորիզոնական տեսադաշտի գերակայող գործառույթը. մարդը (նաև կենդանիների մեծ մասը) հիմնականում կենսագործունեությունը ծավալում է հորիզոնական միջավայրում: Այսպիսի միջավայրում է մարդը սովորել կողմնորոշվել ժամանակի ու տարածության մեջ, հաշվարկել ռեսուրսները, հասկանալ հաջորդականություններն ու հերթափոխները: «Հորիզոնական ընկալումը», սովորական լինելով, համեմատաբար քիչ էներգիա ու ժամանակ է պահանջում: Այս իսկ պատճառով ժամանակատարածային հաշվարկներում կիրառվում է ձախից աջ կամ աջից ձախ գործողությունների հմտությունը, որն էլ հիմք է հանդիսանում «անցյալ-ապագա», «այստեղ-այնտեղ», «գնալ-գալ», «դրական-բացասական» և նմանատիպ դիֆուզիոն սխեմաների կառուցման համար: Ուստի զարգացման օրինաչափությունները բացահայտող ուսմունքներն ու կոնցեպցիաները գործածում են «երկուական համակարգերի» սկզբունքը (այդ թվում և՛ դիալեկտիկան):

Ելնելով այս տեսակետից՝ փորձենք հասկանալ, թե ճանաչող և ինքնահաշվետու սուբյեկտի համար ինչ արժեքականություն ունեն զարգացման կատեգորիայի հասկացությունները, իմացական և հուզական ինչ վերաբերմունք կակնկալվի սուբյեկտից: Ջարգացման ու բարդացման ուղին ավանդականորեն կապված է տեղի ունեցող դեպքերի անդարձելիության, անշրջելիության հետ ինչպես ժամանակային, այնպես էլ իմաստային առումով: «Անշրջելիությունն սկսվում է այն ժամանակ, երբ էվոլյուցիա «ապրող» համակարգի բարդությունը գերազանցում է ինչ-որ շեմ.... Անշրջելիությունը կամ ժամանակի սլաքը իր հետևից բերում է պատահակա-

նութուն»³: Այստեղ գործ ունենք էվոլյուցիայի, բարդության աստիճանի, զարգացման և ժամանակի միակողմանի ուղղվածության փաստերի հետ: Ավելին, այդ փաստերը տողորված են կյանքի իմաստի, պատասխանատվության ու բարեկեցության մասին մտորումներով: Այս առումով, արժե անդրադառնալ «բարդ-պարզ» հարաբերության մեկնաբանությանը:

«Բարդ» ասելով հասկացվում է առարկայի կամ երևույթի կառուցվածքային միավորների, ֆունկցիաների կամ դրանց միջև կոմբինացիաների քանակը: Ըստ Գ. Ի. Ռուզավինի՝ որպեսզի առաջանա նոր համակարգ, մեծ քանակությամբ պարզ տարրերից կպահանջվի հսկայաքանակ համադրություններ (կոմբինացիաներ): Մինչդեռ, երբ համակարգը ներկայացված է հիերարխիկ կազմավորված ենթահամակարգերով, հնարավոր համադրությունների քանակը կտրուկ նվազում է: Ջարգացման գործընթացը միշտ կապված է բարդության կազմավորման հետ⁴: Ռուզավինը, զարգացումը արդարացիորեն դիտարկելով բարդացման համատեքստում, այնուհանդերձ այն դուրս է թողնում սուբյեկտի հետ հարաբերակցության համատեքստից, ինչը, ըստ մեր հայեցակետի, խոչընդոտում է հենց համադրման և մոդելավորման մտային եղանակներին: Որոշ դեպքերում հնարավոր է բարդացում միավորների և ֆունկցիաների քչացման հաշվին, երբ համակարգը փոխում է իր որակը՝ շրջակա միջավայրին համապատասխանելու (հարմարվելու) համար: Սակայն վերջինիս առավել բնութագրական է կամ, ավելի ճիշտ, վերագրական է պարզեցումը: Ըստ Պ. Էտկինսի՝ «Միշտ պետք է համոզված լինել, որ պարզեցումը չի աղճատում երևույթի էական յուրահատկությունները»⁵: Իսկ թե դա ինչ է անում, հեղինակն ուղղակի բացատրություն չի տալիս, այլ շարունակում է գրքի հիմնական մոտիվը՝ ենտրոպիայի և համակարգերի կարգավորվածության թեման:

Հայտնի է, որ պարզից բարդ և հակառակ շարժման ընթացքում փոփոխությունները քանակական բնույթ ունեն: Որոշակի քանակի և ուղղվածության փոփոխությունները միայն կարող են հանգեցնել որակական փոփոխության արդյունքի: Սրա վկայությունն այն է, որ թվաբանական համակարգում միավորների (տարրերի) ավելացմամբ ավելանում են դրանց միջև կոմբինացիոն հարաբերությունները, իսկ նվազեցնելիս՝ պակասում: Բայց սա դեռևս չի նշանակում, որ աճն ու հետաճը ունեն նույն օրինաչափությունը: Ինչ-որ բանի պակասելը կարող է հանգեցնել հասկացման դժվարության, հետևաբար նաև՝ օբյեկտին վերագրվող բարդության: Հակառակ դեպքը ինչ-որ բանի ավելացումն է, որը կարող է հեշտացնել հասկացումը, հետևաբար նաև պարզեցնել օբյեկտը:

Համակարգային օբյեկտների հետազոտման մեթոդաբանական պահանջներից երկուսը վերաբերում են բարդությանն ու զարգացող իրադարձության կանխատեսմանը⁶:

- Ցանկացած բարդ օբյեկտ կարող է հասկացված լինել միայն դրա հիմնական բաղկացուցիչ մասը կազմող գործառույթների, սկզբունքների և

³ Пригожин И., Стенгерс И., ԳՀՎ. աշխ., էջ 373:

⁴ Ст'у Рузавин Г. И. Диалектическая концепция развития и синергетика // «Философские исследования», 1999, № 3, էջ 51–69:

⁵ Эткинс П., ԳՀՎ. աշխ., էջ 57:

⁶ Ст'у Крылов В. Ю., Морозов Ю. И. Кибернетические модели и психология. М., 1984, էջ 20-21:

օրենքների մասին մանրակրկիտ պատկերացման հիման վրա: Հետևաբար, դրա համար հիմք պետք է դառնա բազմաթիվ փորձարարական մաքուր «փաստերի» վերլուծությունը, որը կբնութագրի օբյեկտը տարբեր կողմերից: Այս դրույթը թելադրում է փորձարարական մոտեցումների մեթոդները՝ գործառնության տարրերի դերերի բացահայտման համար (օբյեկտից տվյալ տարրի դուրսբողումը, ավելորդ փոփոխությունների բացառումը, էական փոփոխությունների կառավարումը, գործոնների մեկական կամ «հատ-հատ» փոփոխման սկզբունքի կիրառումը և այլն):

- Տեսությունը պետք է ի վիճակի լինի կանխատեսելու ապագա իրադարձությունները այն հիմքով, որով նկարագրում և բացատրում է ընթացիկ իրադարձությունը:

Այս ամենը հաշվի առնելով՝ մենք առաջարկում ենք «բարդությունը» «պարզության» բերելու («հասկանալու») և դրա կանխատեսման հոգեբանական հաջորդական («կոհերենտ») դրույթներ, որոնց վրա հիմնվելով և գործնական կիրառմամբ կարելի է ոչ միայն լրացնել զարգացման երևույթը բացատրելու փիլիսոփայական գիմանոցը, այլև գործնական լուծումներ ստանալ համակարգերի ուսումնասիրման ժամանակ, մեթոդաբանական ու փորձարարական «բարդությունների» ծագման դեպքում: Դա կարող է յուրատեսակ ալգորիթմ դառնալ բարդ համակարգերի նկատմամբ մտային գիտափորձի և հոգեբանական փորձարարական հետազոտությունների մոդելավորման համար:

Դրույթներ

1. **Ձարգացումը** համակարգի որակական *փոփոխության* (ձևափոխման) գործընթաց է:

2. **Փոփոխությունը** համակարգի նախորդ և հաջորդ վիճակների միջև *համեմատության* արդյունքն է:

3. Փոփոխությունն այնքանով է *հաճախակի* կամ «մանր», որքանով **նկատելի է**:

4. Եթե համակարգի կազմում **բացահայտված է նոր տարր (նորագույնություն)** կամ տարրերի նոր հարաբերություններ (կոմբինացիաներ, բարդություններ), ապա այն համարվում է *ձևափոխված*:

5. **Ձևափոխված վիճակը** պահանջում է *հասկացման* (մտածական) նոր կարգ:

6. **Հասկանալը** ուղեկցվում է հետաքրքրության բավարարման և ճանաչողական *բավականության զգացումով*՝ բերելով հոգեբանական կոմֆորտ կամ դիսկոմֆորտ վիճակների:

7. *Կոմֆորտ հոգեվիճակը* պայմանավորված է հասկացման **հեշտությամբ** (հասկացման նոր կարգը յուրացված է), իսկ դիսկոմֆորտը՝ **դժվարությամբ** (հասկացման նոր կարգը ճիգեր է պահանջում):

8. *Յուրացման* դեպքում հասկացման կարգը **պարզ է** թվում (հեշտ), հակառակ դեպքում՝ **բարդ** (դժվար):

Ստորև առաջարկում ենք զարգացման ուղին և դինամիկան երևակող հոգեբանական-ֆենոմենոլոգիական մոդել, որն իրենից ներկայացնում է եռափուլ, հնգաստիճան հարաբերակցական սխեմա: Սա կարող է կիրառելի դառնալ ցանկացած օբյեկտի ուսումնասիրման և գնահատման գործընթացում հոգեբանական հաշվետվության համար:

Ձարգացման հոգեբանական-ֆենոմենոլոգիական մոդել

Ք	Գործառնության փուլեր		
	Ստրկայի որակական փոփոխություններ	Ստրկայի հետ առնչման ձևի փոփոխություններ	Ինքնազգացման փոփոխություններ
	3	2	1
Մակարդակներ	1 Քարդացում. համակարգում տեղի ունեն տարրական կամ հարաբերակցական փոփոխություններ, հիմնականում՝ ավելացում, աճ, երբեմն՝ պակասում, նվազում:	Դժվարացում. տարբերակիչ ընկալման սահմանափակում, փոփոխությունների գրանցման դժվարություն, մտային գործողությունների անարդյունավետություն:	Դիսկոմֆորտ. մտքի դժվարություններով առաջացած հուզական լարվածություն, անհանգստություն, հետաքրքրությունների անբավարարվածության, տհաճության վիճակ, մտային անհարմարավետություն:
	2 Սպակարգավորում. համակարգի կարգավորվածության խախտում, անկանոնություն:	Օտարում. մտային մոդելի կամ հասկացական կարգի փլուզում, իմացական շփոթ: Ինֆորմացիոն-որոնողական ակտիվացում:	Անորոշություն. ինֆորմացիոն սով, հասկացական հնարավորությունների սահմանափակում, որոշում ընդունելու անհնարիներություն, տագնապայնության աճ:
	3 Ձևավորում. համակարգի նախկին ձևի փոփոխության գործընթաց, նորի առաջացում:	Ճանաչում. հին և նոր պատկերների վերադրում, համեմատում, պատկերի նույնականացում, նմանությունների և տարբերությունների հաստատում:	Սովորականություն. խնդրի պահանջ-պայմանների առաջադրում, հուզական լարվածության նվազում, ինքնազգացողության կայունացում:
	4 Կարգավորում. համակարգի կարգավորվածություն, կանոնավորում:	Յուրացում. պատկերի ճանաչման և վերարտադրման դրական ամրապնդում, մտապատկերի կառուցման կրկնելիություն, մտային հմտությունների ձևավորում, մտային մոդելի առաջադրում, խնդրի լուծում, հասկացական կարգի վերամշակում և բյուրեղացում, ստերեոտիպացում:	Որոշակիություն. նոր իրավիճակին հարմարում, անորոշության հաղթահարում, ինքնազգացողության բարելավում, որոշակի անտարբերություն, հոգեկան հանգստություն և հավասարակշռություն, սովորական վիճակ:
	5 Պարզեցում. համակարգի տարրական և հարաբերական հաստատունություն, ամբողջականության հաստատում:	Չեչտացում. տարբերակիչ ընկալման հնարավորությունների մեծացում, փոփոխությունների գրանցման հեշտություն, պատկերի կառուցման անընդհատականություն, մտային գործողությունների արդյունավետություն:	Կոմֆորտ. հուզական լարվածության կտրուկ անկում, հետաքրքրությունների լիարժեք բավարարում, հաճելիություն և մտային հարմարավետություն:
	3	2	1

Ա կարգի հարաբերությունները (հորիզոնական) պատճառահետևանքային են:

Բ կարգի հարաբերությունները (ուղղահայաց) անցումային են (կարող են լինել նաև պատճառահետևանքային) և կարող են ընդհատվել ցանկացած մակարդակում (դա պայմանավորված է խնդրի հրատապությամբ և/կամ լուծման ռեսուրսներով):

Ցանկացած փուլ Բ կարգի հարաբերություններում զարգացման բաղադրիչային (կոմպոնենտար) կողմն է՝ բարդից պարզ ուղղվածությամբ: Իսկ Ա կարգի հարաբերություններում՝ զարգացման վեկտորական կողմը (ֆենոմենոլոգիապես՝ առարկայից դեպի ներհայեցում (3-2-1 փուլերով), հոգեբանորեն՝ ներհայեցումից դեպի «պատկերի» ընկալում (1-2-3 փուլերով):

Ջարգացման ֆենոմենը ամբողջականորեն հասկանալու համար անհրաժեշտ է Ա կարգի հարաբերությունները դիտել Բ կարգի համապատասխան հարաբերություններով: Օրինակ՝ 2-րդ մակարդակի 3-րդ փուլը չի կարող շարունակվել 3-րդ մակարդակի 1-ին փուլով: Ճիշտ է, երբ 2-րդ մակարդակի 3-րդ փուլը շարունակվի 3-րդ մակարդակի 3-րդ փուլով: Իսկ 1-ին փուլը շարունակվի համապատասխանաբար՝ 1-ին փուլով, 2-րդը՝ 2-րդով և այլն:

Մակարդակները

Սխեմայում յուրաքանչյուր մակարդակ ճգնաժամային է:

Գլխավորը 1-ին մակարդակի գործընթացն է, որն «արթնացնում է» ճանաչողական ակտիվությունը:

3-րդ մակարդակը կարելի է համարել շրջադարձային, բեկումնային:

Ջարգացում տեղի է ունենում 5-րդ մակարդակում, որն արտահայտում է ճանաչողական նոր հնարավորությունների ձեռքբերումը: Սա, ըստ էության, սուբյեկտի կատարելագործումն է, որի շնորհիվ պարբերաբար հաղթահարվում է ճանաչողության օբյեկտի հետ կոնֆլիկտը՝ որպես *նոր, բարդ, դժվար, անհարմար, չհասկացված*:

Փուլերը

3-րդ փուլը առարկայի մասին պատկերացման, դատողության, եզրակացման վերջնարդյունքն է, այսպես կոչված՝ որակի մասին կարծիքը: Սակայն դա որոշվում է ըստ սովյալ առարկայի հետ առնչության ձևի (2-րդ փուլ): Իսկ առնչության ձևի միակ ցուցանիշը ինքնազգացողությունն է (1-ին փուլ):

Փաստորեն, առարկայի որակական փոփոխությունը, որը զարգացման գործընթացում սկզբնական է համարվում, վիճարկելի է, քանի որ կարող են հիմնավոր կասկածի տակ դրվել դրա որակական լինելը, հետևաբար՝ նաև օբյեկտիվությունը: Այդ իսկ պատճառով մեր սխեմայում առարկայի որակական փոփոխությունը դիտվում է որպես արդյունք (էֆեկտ)՝ կախված նախորդող գործառնության փուլերից:

1-ին փուլ է ընդունվում «ինքնազգացողությունը», քանի որ այն համարում ենք նշանակալի (արժեքավոր) փոփոխությունների մասին տեղեկույթի առաջին ցուցիչ: Այս առումով 1-ին փուլը զարգացման ֆենոմենի հուզական (էմոտիվ) բաղադրամասն է, 2-րդը՝ իմացական (կոգնիտիվ), իսկ 3-րդը՝ առարկայական (օբյեկտիվ):

Տվյալ մոդելի համաձայն՝ «զարգացումը» պետք է որ ուղղվի բարդից դեպի պարզը, քանի որ առարկայի (համակարգի) նոր որակի գնահատ-

ման ու հասկացման առաջնային, նախնական դիրքորոշումը դրանց վերագրվող բարդությունն է (փաստորեն՝ թվացյալ զարգացած լինելը)*: Եվ քանի որ հասկացման ընթացքը պարզեցման միտում ունի, հետևաբար զարգացումն էլ կունենա բարդից դեպի պարզը շարժման ուղի:

Աճի և հետաճի վերաբերյալ մեխանիկական բացատրությունը կարող է հանգեցնել որակի գնահատման թյուրըմբռնման: Այսինքն՝ մեկնաբանել աճը որպես առաջընթաց ինչ-որ բանի (տարրի կամ գործառույթի) ավելացման հաշվին, իսկ հետաճը՝ որպես հետընթաց՝ ինչ-որ բանի պակասեցման հաշվին, առնվազն դրական և բացասական դիրքորոշումների դիֆուտոմիա է: Չնայած այն բանին, որ հետաճը օբյեկտին վերագրվող, նկատելի հատկության նվազման (անհետացման) արդյունքում է գրանցվում, այնուհանդերձ, տվյալ առարկան համարվում է ոչ թե պարզվող, այլ հետաճող: Ըստ այդմ՝ փոփոխությունների գրանցման գործընթացում անհրաժեշտ է համեմատել երկու վիճակները՝ նախորդ և հաջորդ: Այս դեպքում աճը և հետաճը կարելի է ընդունել որպես առարկայի քանակական փոփոխություն և ժամանակային ընթացքի առումով միակողմանի, բայց ոչ հակադիր փուլեր (նույնիսկ իրար շարունակող):

Եզրահանգումներ: Այսպիսով, զարգացումն ի հայտ է գալիս օբյեկտի հասկացման դժվարության հետ (բարդացում): Վերջինս էլ ուղեկցվում է տհաճության, անհարմարավետության զգացումներով:

Որևէ համակարգի զարգացումը որոշելը կամ գնահատելը պայմանավորված է ճանաչողական ունակություններով, մտածական կարողություններով, որոնք ուղեկցվում են ինքնազգացողության փոփոխություններով:

Իսկ թե փոփոխությունների ո՞ր փուլում է տեղի ունեցել զարգացումը, որոշվում է ըստ նկատելի կամ գրանցելու նրբության (գործիքային մոտեցում) և վերացարկման մակարդակով:

Առաջարկություններ: Մշակել հատուկ հոգեբանական մարզումների ծրագիր, որի իրականացմամբ որոշակիորեն կմեծանա իմացական գործընթացների արդյունավետությունը, հատկապես մտածական և օպերատիվ հիշողական ակտերի առումով:

Ձևավորել և ուղղորդել հուզական-վարքային հակազդումները խնդրահարույց իրավիճակների հանդեպ՝ կատարելագործելով օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակների և ուշադրության կարգավորման մեխանիզմները:

РАЧЬЯ ОГАННИСЯН – Попытка психологического объяснения феномена «развитие». – Развитие – это философская категория, приписываемая системам (объектам). Процесс развития описывается с помощью ряда моделей. Они касаются только структурных изменений и трансформаций объекта и часто игнорируют субъект познания. Более того, здесь присутствует и фактор субъективного времени, за счёт чего распознавание и различение фаз, процесс систематизации и фиксации переходных момен-

* Օբյեկտին վերագրվող բարդությունն ու հասկացական կարգը հակադարձ համեմատական են: Որքան «աղքատանում է» հասկացման կարգը, այնքան բարդանում է օբյեկտը և հակառակը:

тов развития усложняется. Поэтому один и тот же объект кому-то кажется сложным, а кому-то – простым; один и тот же человек воспринимает определённый объект как сложный, а через некоторое время тот как бы упрощается. И наоборот... Таким образом, строгая объективизация процесса развития порою приводит к затруднениям в исследовании динамических систем и образований, поскольку невозможно точно измерить или проверить качественные и количественные изменения наблюдаемого объекта (системы) в зависимости от субъективных характеристик. По этой причине автор придаёт особую важность психологическим моментам.

В статье кратко излагается гносеологический подход к становлению качества, предлагается психо-феноменологическая модель (гипотетическая концепция) развития в целях превращения этого понятия в прикладную психологическую категорию.

HRACHYA NOVHANNISYAN – *An Attempt of Psychological Explanation of "Development" Phenomenon.* – "*Development*" is a philosophical term, which is attributed to systems. There are several models for describing the process of development. These models often describe structural changes and transformation of objects and in most cases ignore the subject of cognition. Moreover, the circumstance of subjective time is also active here. The subjective time factor complicates the identification and distinction of phases, the process of systematization and fixation of turning points of the development process. As a result, a given object appears to be complex for the first subject and simple for the other. Alternatively, the same subject considers the same object complex at a given moment, but the object appears to be simple after some time.

Thus, the strict objectification of development process leads to difficulties in system dynamics and formation studies, as due to subjective factors, it becomes nearly impossible to exactly measure or verify qualitative-quantitative changes in the object (system) of examination. Therefore, we attribute a particular importance to psychological aspects of development.

The present paper dwells on the gnoseological approach to quality formation and proposes a psychological-phenomenological model (hypothetical concept) in order to convert the term "development" into a concept of applied psychology.